

**ԶԱՐՋԱՐԱՆՔՆԵՐՈՒ ՄԵԶ
ՀԱԻԱՏՔԻ ԶՈՐՈՒԹԻՒՆ ԵՒ
ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՈԹՔ**

Շնորհակալութի՛ւն քեզի, Տէ՛ ՚ր, որ զիս՝ անարժանս արժանի ըրիր քու պարգեւիդ: Դուն՝ որ մարդուն մեղանչումէն եղբն ալ չլքեցիր զայն երբեք, այլ մեր տկարութիւնները դարմանելու համար՝ քու ասփուածային գթութեամբդ երկիր ղրկեցիր քու սուրբ մարգարէններդ եւ սիրելիններդ, որոնք աշխարհի եւ հեթանոս ազգերու խաւարին մէջ լուսափուներ եղան, թէպէստեւ անմիտ ու անօրէն մարդոց կողմէ հալածուեցան: Իսկ որոշուած ափենին աշխարհ ղրկեցիր քու Միածին Որդիդ, Լոյսը՝ Լոյսէդ, Կեանքը՝ Կեանքէդ. եւ անիկա Սուրբ Կոյսէն մարմին եւ մեր նմանութիւնը առաւ իր վրայ, որպէսզի այդ նմանութեամբ մեզ վերսպին իր ասփուածութեան մօփեցնէ, ինք՝ որ մեզի պէս եղաւ: Կոյսէն ծնաւ մարմնով եւ մարդացաւ, մեզի պէս մարդ եղաւ, մնալով իր ասփուածային փառքին մէջ. իր ասփուածութեան մէջ փոփոխութիւն չմրաւ, այլ նոյնն է՝ ինչպէս որ էր եւ է եւ յաւիպեան կը մնայ Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին: Բայց մարդիկը սիրելուն համար՝ մեզի պէս եղաւ, որպէսզի իր փրկութեան ասփուածային գերազանց շնորհքին մասնակից դարձնէ մեզ, իր Հօրը կամքին համաձայն. եւ կափարեց Հօրդ կամքը, եկաւ եւ իր արիւնով մեզ գնեց մեղքերու սփրկական ծառայութենէն. որով մենք քու Որդիիդ արեան գինն ենք, անոր մարմինով եւ արիւնով ազափուած ու փրկուած:

Որդի՝ Ասփուծոյ, այս նեղութեան ցաւերուն մէջ փոկալու զօրութիւն փուր եւ ողորմէ՛ ինծի, ինչպէս ողորմեցար խաչելութեան ափեն քեզի խաչակից աւազակին: Շնո՛րհք փուր ինծի՝ որ համբերեմ այս դառն փանջանքներուն, որպէսզի Ե՛ս ալ արժանի ըլլամ պահելու մեր լուսաւոր հաւափքին աւանդութիւնը, որ ինծի փուիր՝ որպէսզի ճանչնամ եւ կափարեմ քու կամքդ:

Արդ, Տէ՛ր բարերար, դուն որ ըսիր՝ «Ես միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհի վախճանը», մի՛ լքեր զիս, այլ զօրացո՛ւր քու կամքիդ մէջ, որպէսզի կառենանք այս պատերազմին դոկալ քու մեծ անունիդ համար. որպէսզի հաւափքի մեր պարծանքը յայգնուի քու ծառաներուդ եւ քե՛զ ճանչնան իբրեւ Տէր եւ Ասպուած:

Դուն, մարդասէ՛ր, քու արդարներուդ խումբին խառնէ մեզ եւ զօրութիւն դուր՝ որ պատերազմինք եւ ի հարկին մեռնինք քու ճշմարդութեանդ եւ անունիդ համար, եւ դարձեալ փառքով նորոգուինք՝ երբ վերսպին առաքես իւրաքանչիւրին հապուցումներուն բաշխիչը՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսը. որպէսզի զուարթ երեսով կանգնինք անոր դիմաց եւ յաղթանակի պսակը առնենք քեզ սիրողներուն հետ միասին:

Ամենակալ Տէր, դուն որ փառքով կը պսակես քեզի յուսացողները եւ կը կապարես քեզմէ վախցողներուն փափաքը, զիս արժանի ըրէ, Տէ՛ր, որ քու վրադ իմ յոյսս պահեմ, եւ համբերութիւն դուր որ իմ ընթացքս կապարեմ այս նեղութեամբ, որուն մէջ կը գպնուիմ: Դուն՝ որ մեր ցաւերը կը բժշկես, սրբաբեկները կ'առողջացնես, նեղեալները կը հանդարդեցնես, կապուածները կ'արձակես, սգաւորները կը միխթարես, անյոյսներուն յոյս կու դաս, խովածներուն՝ հանգիստ, եւ յոգնածները նաւահանգիստ կը հասցնես, դուն՝ որ սիրով կը նայիս քու արարածներուդ եւ քու քաղցութեամբդ կը կերակրես բոլորը, դուր ինծի, Տէ՛ր, որ ե՛ս ալ պսակը առնեմ բոլոր անոնց հետ՝ որոնք արժանի ըրիր քու անունիդ համար մեռնելու փառաւոր մահուամբ. որպէսզի ե՛ս ալ արժանի ըլլամ յափշտակուելու քու սիրելի Որդիիդ դիմաւորութեան, երբ գայ իր ճառագայթող լոյսին մէջ առնելու սրբանց իրեն փափաքողները, եւ ճշմարդութեամբ դափելու ամբողջ դիեզերքը իր բարկութեան կրակով: Փա՛ ոք քեզի, Որդիիդ եւ Սուրբ Հոգիիդ հետ միասին, յաւիգեանս յաւիգենից: Ամէն:

Ս. ԳՐԻԳՈՐ ՀՈՒՍԱԿՈՂԻԶ